Եվրոպական միությունը Հայաստանի համար

«ԵՄ հանուն մշակույթի. առավել ուժեղ համայնքներ և տեղական նախաձեռնություններ» ծրագրի[1] շրջանակներում հայտարարվում է նախագծային (համայնքային նախաձեռնության) ենթադրամաշնորհների մրցույթ, որն ուղղված է Շիրակի, Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում համայնքային մշակույթի և զբոսաշրջության զարգացմանը:

Հայտարարություն՝ 29.03.2019

Հայտերի ներկայացման վերջնաժամկետ՝ 15.04.2019

Ոլորտներ՝ Մշակույթ, Զբոսաշրջություն, Բնապահպանություն, այլ

Աշխարհագրություն՝ ՀՀ Շիրակի, Կոտայքի, Գեղարքունիքի մարզեր

Տեսակ՝ Համայնքային նախաձեռնության նախագիծ

Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ իրականացվող «ԵՄ հանուն մշակույթի.առավել ուժեղ համայնքներ և տեղական նախաձեռնություններ» ծրագրի **հիմնական նպատակներն են.**

1. Ուժեղացնել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) և պետական ու տեղական իշխանությունների միջև համագործակցությունը:
2. Ուժեղացնել ՔՀԿ-ների՝ մշակույթի և զբոսաշրջության միջոցով համայնքային զարգացմանն աջակցող ծրագրերի մշակման և իրականացման կարողությունները:
3. Բարձրացնել մշակութային մասնակցության մակարդակը և մեծացնել մարդկանց միջև շփումները, ընդլայնել թիրախային շրջանների բնակչության զբաղվածության հնարավորությունները:

vhs DVV International

ASSOCIATION OF MUSEUM WORKERS AND FRIENDS

MEDIA INITIATIVES CENTER

ՍԻՎԻՏԱՍ Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն - ՍԻՎԻՏԱՍ

---

[1] Ծրագիրն իրականացվում է Գերմանիայի ժողովրդական բարձրագույն դպրոցների միության միջազգային համագործակցության ինստիտուտի (Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ), Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի, Թանգարանների աշխատողների և բարեկամների ասոցիացիայի և Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն – ՍԻՎԻՏԱՍ ՀԿ-ի կողմից: Ծրագրի մասին առավել մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ հետևյալ հղմամբ:

Ծրագրի նպատակների իրականացումն ապահովելու համար հայտարարվում են երկու տեսակի ենթադրամաշնորհների մրցույթ՝ համայնքային նախաձեռնության նախագծի (այսուհետ՝ նախագիծ) իրականացման և սոցիալական ձեռնարկություն (ՍՁ) հիմնելու համար:

Սույն ենթադրամաշնորհային մրցույթի նպատակն է Ծրագրի թիրախային մարզերում ընտրված կլաստերներում համայնքային զարգացման նախագծերի իրականացումը գրանցված ՔՀԿ-ների կողմից:

Նախագծերը պետք է իրականացվեն զբոսաշրջության, մշակույթի, բնապահպանության և հարակից ոլորտներում, այդ թվում արվեստ և արհեստ, սպորտ, ագրո և էկոտուրիզմ, բնական և մշակութային հուշարձանների, ինչպես նաև պատմամշակութային ժառանգության հետազոտությանն ուղղված աշխատանքներ, լուսանկարչություն, ճարտարապետություն և դիզայն, ձեռագործ և այլն:

Նախագծային ենթադրամաշնորհի հայտամրցույթն իրականացվում է երկու փուլով՝
1. Գաղափարի փուլ (Առաջին փուլ),
2. Ամբողջական հայտադիմումի փուլ (Երկրորդ փուլ):

Սույն հայտարարությունը վերաբերում է նախագծային ենթադրամաշնորհային մրցույթի առաջին՝ գաղափարի փուլին:

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1.ՏԵՂԱԿԱՅՈՒՄ: Նախագծում ներառված գործողությունները պետք է տեղի ունենան Հայաստանի Հանրապետությունում՝ հետևյալ մարզերում ծրագրի թիրախային կլաստերներում՝

- ✓ **Շիրակի մարզ**- Արփի կլաստեր՝ Շաղիկ, Գառնառիճ, Ծաղկուտ, Զորակերտ, Արդենիս, Բերդաշեն բնակավայրերում,
- ✓ **Կոտայքի մարզ**- Արզական, Բջնի, Մեղրաձոր, Արտավազ, Հանքավան բնակավայրերում,
- ✓ **Գեղարքունիքի մարզ**- ՍԵԳԱՄԱ կլաստեր՝ Սևան, Լճաշեն, Գավառ, Նորատուս, Մարտունի, Մադինա բնակավայրերում:

2.ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՌՈՒԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ[2]: Այս ենթադրամաշնորհի անմիջական շահառու լինելու համար դիմորդը պետք է լինի.

---

[2]Այս պահանջները վերաբերում են հայտ ներկայացնող ՔՀԿ-ին, իսկ կոնսորցիումի պարագայում՝ գլխավոր հայտատու ՔՀԿ-ին:

- ✓ Քաղաքացիական հասարակության կազմակերպություն՝ ՀԿ, հիմնադրամ, ՀՈԱԿ՝ գրանցված և գործող Ծրագրի թիրախային մարզերում (Շիրակ, Կոտայք, Գեղարքունիք),
- ✓ Պետք է ունենա առնվազն երեք տարվա գրանցում որպես ՔՀԿ կամ (ավելի կարճ ժամանակահատվածում գործող ՔՀԿ-ների դեպքում) իրականացրած լինի 3-5 ծրագիր /նախաձեռնություն (կախված ծրագրի /նախաձեռնության մեծությունից),
- ✓ Պետք է մասնակցած լինի Ծրագրի շրջանակներում անցկացված դասընթացներից նվազագույնը 2-ին (1 ներածական դասընթաց և 1 թեմատիկ դասընթաց, կամ 2 թեմատիկ դասընթաց):

Հայտ կարող է ներկայացվել նաև կոնսորցիումի կողմից, որում գլխավոր հայտատուն պետք է լինի գրանցված ՔՀԿ և համապատասխանի վերոնշյալ չափանիշներին, իսկ համահայտատուները կարող են լինել շահույթ հետապնդող կազմակերպություններ, գործող ոչ ֆորմալ հասարակական խմբեր, տեղական ինքնակառավարման և համայնքային այլ կառույցներ, որոնք կարող են լինել ինչպես թիրախային մարզերից, այնպես էլ ՀՀ բոլոր մարզերից և մայրաքաղաքից:
Այն ՔՀԿ-ները և այլ կառույցները, որոնք չեն մասնակցել Ծրագրի շրջանակներում կազմակերպված դասընթացներին, կամ մասնակցել են միայն մեկ դասընթացի, կարող են դիմել մրցույթին միայն որպես համահայտատու:

3.ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ:Նախագծերի իրականացման և վերջնական հաշվետվության տրամադրման ժամանակը չի կարող գերազանցել **12 (տասներկու) ամիսը**: Փոքր բյուջեով ավելի կարճ նախագծեր նույնպես կարող են ներկայացվել:

4. ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՉԱՓԸ: Յուրաքանչյուր նախագծային ենթադրամաշնորհ տրամադրվում է ներքոնշյալ նվազագույն և առավելագույն ֆինանսավորման սահմաններում.

Նվազագույնը՝ 2 000 Եվրոյին համարժեք ՀՀ դրամ
Առավելագույնը՝ 6 000 Եվրոյին համարժեք ՀՀ դրամ (որոշ բացառիկ դեպքերում հնարավոր է ֆինանսավորում մինչև 12 000 Եվրոյին համարժեք ՀՀ դրամ – տես՝ Ուղենիշներ)

5. ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ: Հայտադիմումների ներկայացումը և գնահատումը Շնորհատուի կողմից տեղի կունենան երկու փուլով.

- ✓ Գաղափարի փուլ (Առաջին փուլ),
- ✓ Ամբողջական հայտադիմումի փուլ (Երկրորդ փուլ):

Հայտադիմումները կգնահատվեն հանձնաժողովի կողմից՝ հիմնվելով մշակված չափանիշներին հայտատուի և ներկայացված գաղափարի համապատասխանության վրա:

ՍՈՒՅՆ ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ, ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍԻՆ ԱՌԱՎԵԼ ՄԱՆՐԱՄԱՍՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԱՐՈՂ ԵՔ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՈՒՂԵՆԻՇՆԵՐՈՒՄ:

6. ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ ԵՎ ՁԵՎԸ: Առաջին /ընթացիկ/ փուլում Հայտատուն պետք է ներկայացնի Գաղափարի համառոտ նկարագրությունը: Հայտադիմումի ձևաթուղթը կարող եք գտնել այստեղ:

Հայտերը պետք է ներկայացվեն Շնորհատուի կողմից հրապարակված ուղենիշների հիման վրա: Հայտերը պետք է ներկայացվեն հայերենով կամ անգլերենով: Ձեռագիր հայտերը չեն դիտարկվի:
Յուրաքանչյուր հիմնական հայտատու կարող է ներկայացնել միայն մեկ նախագծի հայտ և, ցանկության դեպքում, ևս մեկ սոցիալական ձեռնարկության հիմնման կամ ընդլայնման հայտ: Միևնույն ժամանակ նույն հայտատուն կարող է ներգրավված լինել այլ հայտերում որպես համահայտատու:

Առաջին՝ գաղափարի փուլի համար նախատեսված հայտադիմումը պետք է ուղարկել էլեկտրոնային փոստով՝ info@dvv-international.am և asryan@dvv-international.am հասցեներին՝ վերնագրում նշելով **«Նախագծային ենթադրամաշնորհի հայտ. Առաջին փուլ. ԵՄ հանուն մշակույթի»**: Հայտադիմումն ստանալուց հետո մեկ օրվա ընթացքում դրա ստացումը հաստատող էլեկտրոնային ծանուցում կուղարկվի հայտատուին:

Հայտերի ընդունման վերջնաժամկետը **2019թ-ի ապրիլի 15-ը՝ ժամը 18:00-ն է**:

Վերջնաժամկետից հետո ներկայացված հայտադիմումները չեն ընդունվի:

Ոչ ամբողջական հայտերը կմերժվեն:

Գաղափարի փուլը հաղթահարած Հայտատուները հնարավորություն կունենան մասնակցելու հայտամրցույթի **երկրորդ՝ եզրափակիչ փուլին:**

Հայտերի ներկայացման պահանջներին առավել մանրամասն կարող եք ծանոթանալ հետևյալ Ուղենիշներում:

7. ՈՒՂՂՈՐԴԻՉ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ԱՌԱՋԻՆ՝ ԳԱՂԱՓԱՐԻ ՓՈՒԼ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	ԱՄՍԱԹԻՎ	ԺԱՄԱՆԱԿ
1.Բաց հայտարարություն	մարտի 29, 2019	10:00

2.Տեղեկատվական հանդիպում (Շիրակ)	ապրիլի 5, 2019	12:00
3.Տեղեկատվական հանդիպում (Գեղարքունիք)	ապրիլի 8, 2019	12:00
4.Տեղեկատվական հանդիպում (Կոտայք)	ապրիլի 9, 2019	12:00
5. Հարցերի պատասխանների հրապարակում	ապրիլի 12, 2019	18:00
6.Հայտերի ներկայացման վերջնաժամկետ	ապրիլի 15, 2019	18:00
7.Առաջին փուլի արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն	մայիսի 6, 2019	18:00